Պարույր Սևակ

Հայտարարում եմ

Օդում լավ ձե՞ռք է մնացել կախված՝
սիրո՛վ կսեղմեմ.
Անարատ սի՞րտ է զուր տեղը դաղված՝
ցա՛վը կմեղմեմ.
Սրբատաշ քա՞ր է լուռ ընկած գետին՝
կդնեմ պատի՛ն.
Թե հալոցք է պետք՝ սառույց էլ լինեմ՝
կդառնամ կաթիլ.
Թե թանաք է պետք փրկարար գործին՝
Ի՜նչ թանաք, կտամ արյո՛ւնըս անգամ,
Թե նոր զոհ է պետք ընդհանուր գործին՝
Այդ ո՞ւմ եք փնտրում, ես արդեն հո կամ:
Նաև ասում եմ.
Գերադասում եմ կրակից հեռու մի փոքր մրսել,
Քան այրվել նրա մոտիկությունից.
Եվ հրաժարվել հյուրասիրվելու սուր ցանկությունից,
Քան դժվարությամբ կերածս մարսել...
Հայտարարում եմ.
Միայն ընդհանուր հայտարարում են
Ճշտվում - ճշգրտվում տրված թվերը,
Թռիչքի մեջ են փորձվում թևերը,

Մարմնի ձևերը՝
լոկ մերկանալիս,
Անգին նվերը՝
լոկ ստանալիս,
Լոկ ճուտ հանելիս՝
Թռչունի առողջ կամ լակ ձվերը
Թռչուններն իրենք՝
Երբ սկսվում է նրանց չվելը...
Հայտարարում եմ.
Չե՛մ պրծնի երբեք կնոջ նազանքից,
Իսկ նազուտուզից հոգնել եմ վաղուց...
Չե՛մ ելնի երբեք խորունկ ակոսից,
Խորամանկ փոսից զզվել եմ վաղուց....
Չե՛մ հոգնի երբեք մարմնի մարզանքից,
Մտքի մարզանքից հոգնել եմ վաղուց...
Հայտարարում եմ.
Իմ փորձված մետրը երբեք չեմ փոխի
անորոշ թիզով,
Փորձված բանջարն իսկ երբեք չեմ փոխի
անծանոթ մսով:
Միջնադար ընկնեմ,
Թե բռնակալ է իմ շահնշահը՝
չեմ դառնա վեզիր,
Ես նրա համար ոչ թե շքեղ գորգ -
Չեմ դառնա անգամ և մաշված խսի՛ր...
Ապագա ընկնեմ՝
Եթե հանդիպեմ գայլ ու աղվեսի,
տուզի և տզի,
Գործուղում կառնեմ, կվերադառնամ
Քսաներորդի այս ծանոթ կեսին...

Հայտարարում եմ, օ ո՜չ, խնդրում եմ.
-Գործուղում տվեք ապագա գնամ...

29.V.1957թ.
Մոսկվա